

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ԴԱՎԻԹ ԲԵԿԻ «ԸՆՏԻՐ ՊԱՏԽՈՒԹՅԱՆ» «ՆԱԽԱԴԱՂԱՓԱՐ»
ՈՐԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Լ. Գ. ԽԱԶՆԻՐՅԱՆ, Ն. Ն. ԽԱԶՆԻՐՅԱՆ

Վերջին տասնամյակներում մեր հարուստ պատմագրության առանձին հուշարձանների գիտա-քննական լույս ընծայումը արժեքավոր ներդրում է ինչպես հայագիտության, այնպես և կովկասագիտության զարգացման խրնդրում: Այդ ուղղությամբ ծավալվող աշխատանքները անհրաժեշտ է ամեն կերպ խրախուսել ու առաջ մղել՝ ապահովելով նաև դրանց ուսերեն հրատարակությունները, ելնելով Կովկասի եղբայրական ժողովուրդների և Արևելքի պատմության լուսաբանման համար իբրև սկզբնաղբյուրների նրանց ունեցած կարևոր նշանակությունից:

Ոչ պակաս կարևորություն ունեն նաև հայ ազատագրական պայքարի պատմությանը վերաբերող մատենագրական հուշարձանների գիտա-քննական հրապարակումները, որոնք բացահայտում են պատմական տարբեր պարբերաշրջաններում հայ ժողովրդի ընդվզման ու հերոսական ոգորումների դրվագները: Այդ բնույթի մատենագրական մեծարժեք հուշարձան է նաև Ստեփանոս Շահումյանի անվամբ հայագիտությանը հայտնի «Ընտիր պատմություն Դավիթ Բեկի և պատերազմաց Հայոցն Խափանու...» բնագիրը, որի գիտա-քննական հրապարակումը վաղուց անհրաժեշտություն է դարձել: Տողերիս հեղինակները դեռևս 1969 թ. ձեռնամուխ էին եղել առանձին գրքով, ի հավերժացումն Դավիթ Բեկի կողմից ղլխավորված Սյունիքի ազատագրական շարժման 250-ամյակի, այդ սկզբնաղբյուրի գիտա-քննական բնագրի կազմման աշխատանքներին: Սակայն պրոֆ. Ա. Ն. Աբրահամյանը հապճեպությամբ «Բանբեր Հայաստանի արխիվների» (1972 թ.) № 3-ում հրապարակել է «Ընտիր պատմության» «նախագաղափարը»: Այդ փութկոտությունը պրոֆ. Ա. Աբրահամյանին հանգեցրել է բնագրագիտական ու ձեռագրագիտական մի շարք սխալների:

Որքան էլ տարօրինակ է աղբյուրադեռի համար, սակայն փաստ է, որ պրոֆ. Ա. Աբրահամյանը, չնայած իր հավաստիացումներին, անձամբ նեղություն չի կրել «Ընտիր պատմության» «նախագաղափարը» հրատարակելիս նրա բոլոր խմբագրությունները ուսումնասիրելու: Նա բավարարվել է Ե. Փեչիկյանի՝ դեռևս 35 տարի առաջ լույս տեսած «Դավիթ Բեկի պատմագրական աղբյուրները և Մխիթարյանք» հոդվածի («Բազմավեպ», 1938, թիվ 6—9, էջ 172—187) փաստական ու բանասիրական տեսակետից առարկելի ու հակասական հետևությունների որդեգրումով, միաժամանակ ավելացնելով դրանց նաև սեփական սխալները: Պրոֆ. Աբրահամյանի համերաշխությունը Ե. Փեչիկյանի բնագրագիտական ու ձեռագրագի-

տական բոլոր հակասական պնդումների հետ, իբրև կանոն, զարմանալիորեն բացարձակ է:

Այսպես, միևնույն էջում՝ մոռանալով, որ Փեշիկյանից վերցրած տեղեկության համաձայն (սակայն առանց նրան վկայակոչելու) գրել է՝ «Ընտիր պատմության» երկու ձեռագիր օրինակ այժմ գտնվում է ս. 'Հագարի մատենադարանում¹, ընդամենը մի նախադասություն հետո պրոֆ. Աբրահամյանը շարունակում է. «Ընտիր պատմությունն» այժմ հայտնի է հետևյալ վեց ձեռագիր ընդօրինակություններով:— 1. Վեներտիկի Մխիթարյանների մատենադարանի Ա. Գ.—620 ձեռագիրը՝ բաղկացած 61 էջից: Այս ձեռագիրը եղած ընդօրինակություններից հնագույնն է. նրանից Լև միջանկյալ ուռնջ օղակներով ծագում մյուսները»²:

Այստեղ թույլ են տրված ոչ թե պատահական վրիպումներ, այլ՝ ելակետային սխալներ: Նախ՝ «Ա. Գ. 620» համարի տակ ոչ թե մեկ ձեռագիր է գրանցված Վենետիկի մատենադարանում, այլ, ինչպես Փեշիկյանն է վկայում, երկու. որոնք բովանդակում են «Ընտիր պատմությունը» ծավալային տարբեր ընդգրկումով՝ մեկը 33 էջ, մյուսը՝ դրա մոտավորապես կրկինը՝ 61 էջ: Երկրորդ՝ «հնագույնը» ոչ թե 61 էջանոց ձեռագիրն է, այլ՝ 33 էջանոցը: Հակասական պնդումներն այս հարցում ավելի քան ակնբախ են պրոֆ. Աբրահամյանի երկու հոդվածներում: Այսպես, «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսում հրատարակած հոդվածում նա երեք անգամ հայտարարում է, որ «Ընտիր պատմության» «Վենետիկի հնագույն» օրինակը... ընդարձակ ձեռագիրն է... (մի անգամ՝ էջ 85-ում, 2 անգամ՝ էջ 87-ում), իսկ «Պատմա-բանասիրական հանդեսում» արդեն իբրև «նախնական բնագիր» վկայակոչում է իր հրատարակած «նախադադափարը»՝ մոռանալով, սակայն, թե ի՞նչ է գրել «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսում: Այս անգամ էլ նա պնդում է. «Փեշիկյանը նշված հոդվածում հրապարակել է սենսացիոն մի տեղեկություն, որ «Ընտիր պատմության» հայտնի և հայագիտության մեջ փառափառությամբ ստացած բնագիրը ոչ քան Ղուկաս Խերաստացու նախնական գրվածքն է (իմա՝ Գուլամիրյանի հրատարակության հիմքում ընկած ձեռագրի այսպես կոչված «61 էջանոց» ընդարձակ տարբերակը—Լ. Խ., Հ. Խ.), այլ նրա հետագայի խմբագրված օրինակը: Նա հայտնել է նաև, որ Սեբաստացու նախնական բնագիրը հասել է մեզ և այժմ պահվում է Վեներտիկի Մխիթարյանների մատենադարանում Ղ—620 քվանդանտի տակ»³: Իսկ նույն «Պատմա-բանասիրականի» էջերում ընդարձակ տարբերակի մասին, նահանջելով «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսում արած իր պնդումներից և կասկածի տակ առնելով նրա «հնագույն» լինելը, ասում է՝ դա «հնագույն օրինակներից է»⁴:

Երրորդ սխալն այն է, որ ԼԹԼ պրոֆ. Աբրահամյանը անձամբ բնագրագիտական ու ձեռագրագիտական վերլուծության ԼԹԼ արկած լինելը հիշյալ աղբյուրի բոլոր ընդօրինակությունները, ապա աներկբայորեն կհամոզվեն,

¹ «Բանբեր Հայաստանի արխիվների», 1972, № 3, էջ 85: Այս և հետագա բոլոր ընդգծումները մերն են:

² Նույն տեղում:

³ «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 4, էջ 161:

⁴ Նույն տեղում, էջ 160:

... ձեռագրական մյուս բոլոր արտագրությունները չեն ծագել սրանցից և ո՛չ մեկից: Ավելին. սրանցից և ո՛չ մեկը ո՛չ մի բնօրինակություն էլ չի ունեցել...

Ի դեպ, պրոֆ. Աբրահամյանին ամենեին չի հետաքրքրում, թե բնագրական զարգացման ինչպիսի ուղի է անցել «Ընտիր պատմությունը»: Նա եթե նախապես բնագրագիտական քննության ենթարկած լիներ «Ընտիր պատմության» տարբեր խմբագրությունները, ապա երբեք Ղուկաս Սեբաստացու անմշակ՝ սեագիր նոթագրությունը տպագրության չէր հանձնի որպես «սենսացիոն»։ «պատմագիտական մեծ արժեք» ներկայացնող բնագիր...

Այսպես, Ե. Փեչիկյանի հաղորդումն այն մասին, որ Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում առկա է Ղուկաս Սեբաստացու թերատ, անմշակ և նոթագրային առաջին զրառումը, պրոֆ. Աբրահամյանը ներկայացնում է որպես «սենսացիա»։ Օրինակ՝ «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսում նա գրում է. «Փեչիկյանը տվյալ հոգվածում հաղորդել է սենսացիոն մի տեղեկություն այն մասին, որ Մխիթարյանների մատենադարանում պահպանվել է Մխիթար (???) Սեբաստացու նախագաղափար այն բնագիրը, որ...» (էջ 88)։ Անցողակի նկատենք, որ այստեղ պրոֆ. Աբրահամյանը անփութորեն նույնացրել է Ղուկաս Սեբաստացուն՝ Մխիթար Սեբաստացու հետ...։ Այնուհետև՝ «Պատմա-բանասիրական հանդեսում» կարդում ենք. «Փեչիկյանը նշված հոգվածում հրապարակել է սենսացիոն մի տեղեկություն, որ «Ընտիր պատմության» հայտնի և հայագիտության մեջ քաղաքացիություն ստացած բնագիրը ոչ թե Ղուկաս Սեբաստացու նախնական գրվածքն է, այլ...» (էջ 161)։ Բայց չէ՞ որ Ղուկաս Սեբաստացու «նախագաղափար» կոչված տարբերակը թերատ, անմշակ և փաստական տվյալներով աղբատիկ ձեռագրական հում նյութ է, որի մասին արված հաղորդումը «սենսացիա» համարելը պարզապես անգիտության հետևանք է։ Այս հայտարարությունը, ըստ երևույթին, պետք է եկել պրոֆ. Աբրահամյանին «նախագաղափարի» հրատարակության կարևորությունը «հիմնավորելու» համար։

Սակայն ոչ այլ ոք, քան այդ հաղորդման հեղինակ Ե. Փեչիկյանը իրավամբ հավաստում է, որ ընդարձակ տարբերակը, ի տարբերություն համառոտի (իմա՝ «նախագաղափարի»), վերջինիս կրկինն է իր ծավալով, ընդ որում՝ «այս առավելությամբ ու, բացի դեպքերու մանրամասնությունեն, ունի վերջարան մը՝ ուր կը ձաղկե անմիարանությունը՝ պատեառ ֆայլայման և կործանման, ինչ որ կը պակսի նախորդ (իմա՝ «նախագաղափարի») ձեռագրին մեջ՝ այն է հ. Ղուկասի գրածեն, և հետո կուտա Դավիթ Բէկի զորավարներուն և անոնց բանակներուն և բանակաւ(ե)ղներուն անունը, հուսկ Տեւ Ավետիս ֆահանա զօրավարին վրա ներքոյ մը՝ նման կիլիկյան երգիչներու ողբերգ-գովեստին ի պատիւ ասպետ Լիպարիտի»⁵։ Բացի այս ճիշտ գնահատականից, որ փաստական բոլոր տվյալներով ապացուցվում է նաև խմբագրությունների մանրախույզ ուսումնասիրմամբ, «նախագաղափարի» մեր ձեռքի տակ գտնված մանրալուսանկար ժապավենում, բնագրի վերջում, գիտակ այլ անձնավորության կողմից ձեռագրով ավելացված է մի ծանոթագրություն, որը լիովին համապատասխանում է բնագրի բուն իսկ իրավիճակին։ Այնտեղ կարդում ենք. «Ստեփանոս Շահումյան պատմած է ս. Ղազարու

5 «Բազմավեպ», 1938, թիվ 6—9, էջ 175։

մեջ Դավիթ Բեկի պատերազմներու պատմությունը և Բ. Ղուկաս Սերաստացին նոթագրած է և ապա ավելի բնորոշակ և գրական ոճով շարադրած է. այս հատուր նոթագրությունն է»⁶:

Այս բոլորից հետո, շնայած պրոֆ. Աբրահամյանի հարկադրաբար խոստովանությանը «նախագաղափար» բնագրի նաև «պակասություններ» մասին, ինչպես՝ և կարելի է իբրև լուրջ հավաստում ընդունել նրա հետևյալ հայտարարությունը. «Իր պակասություններով հանդերձ, Ղուկաս Սերաստացու նախագաղափար «Պատմութիւն Ղափանցոց» բնագիրն ունի պատմա-գիտական մեծ արժեք (sic!), ուստի այն հրատարակում ենք՝ դնելով գիտական շրջանառության մեջ»⁷:

Պրոֆ. Աբրահամյանը, խորհրդավոր հանդիսավորությամբ շեշտելու համար անհարկիորեն հրապարակ հանվող «նախագաղափարի»՝ հայագետների կողմից «անուշադրության» մատնված լինելու «պատճառը», վկայակոչում է, դարձյալ հենվելով Փեչիկյանի վրա՝ այն «փաստը», որ, իբր, Չամչյանին և Ալիշանին հայտնի չի եղել այն: Նա գրում է. «Նախագաղափար այդ աշխատությունը, ինչպես ցույց է տվել Փեչիկյանը, վրիպել է ինչպես Մ. Չամչյանի, այնպես էլ Ալիշանի ուշադրությունից և չի հրատարակված»⁸: Սակայն այս առնչությամբ ասենք, որ Ն. Փեչիկյանը ձիշտ չէ իր այդ ենթադրության մեջ, երբ գրում է. «Հ. Ալիշան որքան որ Դավիթ Բեկի պատմության հեղինակ հ. Ղուկասը կը համարի, սակայն իրականին մեջ ինք անժանոթ կթվի հ. Ղուկասի ձեռագրին, որովհետև եթե տեսած ըլլար մականգիրը հ. Ղուկասի անունով՝ իբր նորություն պիտի չհայտարարեր»⁹: Մինչդեռ, իրականում, դա ազդպես չէ. Ալիշանը «Լիշկ» կամ «Լեշկ» գետակի անունը ճշգրտելիս համեմատություն է անցկացնում ինչպես Ա. Գուլամիրյանի հրատարակածի, այնպես և Վենետիկում պահվող նախագաղափար ձեռագրի հետ՝ ծանոթագրելով. «Ի տպագրելու պատմութեան (իմա՝ Գուլամիրյանի—Լ. Խ., Հ. Խ.) պակաս է անուն գետակին. այլ գտանի ի բնագրին, որ կայ ի մերում գրատան»¹⁰: Ինչպես նման պարագաներում ասում են՝ մեկնաբանություններն ավելորդ են: Ինչ վերաբերում է Չամչյանին, ապա նա այն հմուտ պատմաբանն է, որը հասկացել է, թե լավագույն և ամբողջական բնագիրը ոչ թե «նախագաղափարն» է, այլ՝ ընդարձակը, այդ պատճառով էլ Սյունիքի ազատագրական շարժումները շարագրել է ըստ վերջինիս՝ որպես առավել հավաստի աղբյուրի: Իսկ եթե հայագետներից ոչ ոք չի էլ մտածել «նախագաղափար» հրատարակելու մասին, ապա այդ այն պատճառով, որ ամբողջականի և առավել հավաստի խմբագրության առկայության պակասում այն գիտական արժեք չի ներկայացրել:

Ե. Փեչիկյանի պնդմամբ՝ «Հետիւր պատմութեան» բնագիրը զարգացման երկու փուլ է ունեցել, ըստ որում, առաջինը «նախագաղափարն» է, երկրոր-

⁶ Տե՛ս Վենետիկյան Ա. ձեռագրի մեթոնագրված տարբերակի մանրալուսանկար ժառանգներ, էջ 30: Այս և Վենետիկյան Բ. ձեռագրի մանրալուսանկար ժառանգներ սիրալիր տրամադրել է մեզ տարբույ Ս. Օրբելյանը, որին և մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում:

⁷ «Բանբեր Հայաստանի արխիվներին», էջ 91:

⁸ Նույն տեղում, էջ 88:

⁹ «Բաղմավեպ», էջ 175—176:

¹⁰ Ղ. Ա. ի շ ա ն, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 300, ծան. 11:

զը՝ ընդարձակը, որը, իբր, ոչ թե միևնույն Ղուկաս Սեբաստացու գրչին է պատկանում, այլ Մխիթարյան հայրերի հավաքական ջանքերի արդյունք է, և ընկած է Գուլամիրյանի հրատարակության հիմքում։ Որպեսզի բնագրական համեմատություններն ու զուգադրումները հնարավոր լինեն, այսուհետև պայմանականորեն «նախադադափարը» ներկայացնելու ենք իբրև A տարբերակ, ընդարձակը՝ իբրև B տարբերակ, իսկ Գուլամիրյանի հրատարակությունը՝ իբրև C տարբերակ։

Այսպես, ուրեմն, Փեչիկյանը A և B տարբերակների կապակցությամբ իր բանասիրական քննությունից եզրակացնում է, որ «Մխիթարյան հայրերու գրի առած պատմություններն են»¹¹ ամփոփված B տարբերակում, ընդ որում իր բնագրագիտական բոլոր զուգադրումներն էլ կատարելիս Փեչիկյանը B տարբերակը ներկայացնում է որպես «Մխիթ. Հարց» աշխատություն¹²։ Բայց նման պնդումը, պետք է ասել, մոլորություն է։ Իրականում՝ սույն սկզբնաղբյուրի պատմա-լեզվական մշակումները անցել են զարգացման ոչ թե երկու, այլ երեք փուլ, ընդսմին՝ առաջին երկուսը հենց Պավիթ Բեկի գրված խավորած ազատագրական շարժումների պատմությունը գրառող Ղուկաս Սեբաստացու ստեղծած տեքստերն են՝ համառոտ և ընդարձակ տարբերակներով. իսկ միայն երրորդը՝ Գուլամիրյանի հրատարակության հիմքում ընկած ձեռագիրը (որը տարբեր է B տարբերակից) և մյուս բոլոր ընդօրինակությունները՝ Վենետիկի մխիթարյան գիտնականների խմբագրմամբ կազմվածն է, որը հեղինակային նույն ընդարձակ տեքստի սուկ լեզվա-ոճական վերամշակումն է. ամենայն հավանականությամբ՝ պայմանավորված հրատարակության նախապատրաստելու անհրաժեշտությամբ¹³։ Այն հարցադրման ճշտությունը, որ Ղուկաս Սեբաստացին ստեղծել է բնագրային երկու տարբերակներ, մեկը՝ նախնականն ու համառոտը, նոթագրային բնույթի, մյուսը՝ ընդարձակը, վերամշակվածն ու ամբողջականը, որը ծավալային ու փաստական նույն ընդգրկումն ունի, ինչ երրորդ տարբերակը, կասկածից վեր է։ Դրանում համոզվելու համար բավական է զուգադրական համեմատություններով առնչությունների մեջ դնել երեք տարբերակներն էլ, որպեսզի ականերև դառնա այն ստույգ իրողությունը, որ լեզվա-ոճական առանձնահատկությունների ընդհանրության տեսակետից A տարբերակը առավել մերձ ու հարազատ է B տարբերակին, քան C տարբերակին, ըստ որում վերջինս առանձնանում է առաջին երկուսից էլ հավասարապես։ Բավարարվենք միայն մի երկու փաստի առգրքմամբ.

¹¹ «Բաղմավեպ», էջ 177։

¹² Նույն տեղում, էջ 176, 189։

¹³ Մենք մեր հոդվածը ավարտել էինք, երբ լույս տեսավ Ս. Արամյանի հոդվածը «Բաղմավեպում» (1972 թ., № 2—3)՝ «Պավիթ Բեկ կամ Պատմություն Ղափանցուց» վերաբերյալ։ Անկախ մեզանից՝ նա նույնպես գտնում է, որ A և B տարբերակների գրառողը միայն Ղ. Սեբաստացին է. սակայն C տարբերակի (իմա՝ Գուլամիրյանի հրատարակության) վերաբերյալ նրա պնդումն այն մասին, թե իբր հրատարակված տեքստը Գուլամիրյանի իսկ «կամայական փոփոխություններն» ու խմբագրման արդյունք է՝ հիմնովին սխալ է։ Այն հերքվում է հետևյալ անառարկելի փաստով. բանն այն է, որ ղեկավար Գուլամիրյանի հրատարակությունից 112 տարի առաջ (1759 թ.) Ամստերդամում արտագրված Ռաֆայել Հովակիմյանի գրչագիրը (ինչպես և մեզ հասած մյուս ձեռագրերը) ունի բնագրային հենց նույն ամբողջական ընթերցումը, ինչ Գուլամիրյանինը։

A տարբերակը
(կամ՝ Համառոտը)

1. «Եւ զգիւղորէսն Գան-
շու և Շամախու ասպատա-
կեալ յաւար առին. որք և
զագուկեցին ի մուսարեկեան
տոհմէ զիշխանն Շամախու
սպանին, և զամենայն զօ-
րաւոր զիմակեացսն սատա-
կեցին և զժողովորդսն
երկրին և զկանայս և զը-
մանկունս զերի վարեցին:
Զորոց մի ըստ միոջէ յայ-
սմիկ վայրի շունիմք պատ-
մել» (էջ 1):

2. «Եւ կամ թէ զիա՞րդ
զայսչափ շարիս տեսեալ
հայոց ընդդէմ էլին նոցա
ի բաց վանել. զունդ կազ-
մեցին, զղէն զգեցան, պատ-
րաստեցան ի պատերազմ,
նակատեցան առ Թաբար
զեառվն ընդդէմ ամենայն
հարձակելոցն յասպատա-
կութիւն երկրին իւրեանց»
(էջ 1):

B տարբերակը
(կամ՝ Ընդարձակը)

«Եւ զգիւղորէսն Գանշու և
Շամախու ասպատակեալ
աւար առին, և զագուկեցին
ի մուսարեկեան տոհմէ զիշ-
խանն Շամախու սպանին,
և ամենայն զօրաւոր զի-
մակսն սատակեցին, և զժո-
ղովորդս երկրին և զկա-
նայս և զմանկունս զերի
վարեցին, զորոց շունիմք
յայսմ վայրի մի ըստ միո-
ջէ պատմել» (էջ 1):

«Եւ կամայ թէ զիա՞րդ
զայսչափ շարիս տեսեալ
հայոց բնակչացն Քուբա-
րացոց և ուխտացոց ընդ-
դէմ էլին նոցա ի բաց վա-
նել. զունդ կազմեցին, զէն
զգեցան, պատրաստեցան ի
պատերազմ, նակատ կազ-
մեցին առ Թաբար զե-
առվն, ընդդէմ ամենայն
յարձակելոցն յասպատա-
կութիւն երկրին իւրեանց»
(էջ 1):

C տարբերակը
(կամ՝ Գուլամիրյան հրտ.)

«Եւ զգիւղորէսն Գեան-
ջաւու, և Շամախու ասպա-
տակեալ աւար հարկանէին,
և զկուկեցին Մուսարէ-
զեան տոհմէ զիշխանն Շա-
մախու, ի մահ վատնէին
և զամենայն զօրաւոր զի-
մակացսն առ հասարակ
սատակէին, և զժողովորդս
երկրին զկանայս, և զման-
կունս ի գերութիւն վարէին
զորոց մի ըստ միոջէ
յայսմ վայրի շունիմք պատ-
մել» (էջ 1—2):

«Եւ կամ թէ զիա՞րդ
զայսչափ շարիս տեսեալ
Հայոց բնակչացն Գուգա-
րացոց, և որք շուրօ էին
բնակիչք Հայոց, զինու
զարդու յօրինեցան, ի
մարտ պատրաստեցան
միահամուռ ճակատեալք
առ Թաոթառ գետովն ընդ-
դէմ ամենայն արձակելոցն
ի յասպատակութիւն երկրի
իւրեանց» (էջ 2):

Ընդգծված բառերից, բառակապակցություններից ու նախադասություն-
ներից ակնբախ հետևում է, որ A և B տարբերակները լեզվա-ոճական ա-
ռանձնահատկություններով առավել մերձ են ու հարադատ իրար, քան այդ
երկուսը՝ C տարբերակին: Բնագրային համեմատությունների այս լույսի տակ
զիտական վավերական արժեք չի ներկայացնում հայագիտության մեջ հայտ-
նված այն կարծիքը, որ «Մխիթարյան Բ ձեռագիրը... որքան կը խոտորեր
իր մանրամասնությամբ և նորանոր պարագաներով Ա ձեռագրեն՝ իր ամբող-
ջությամբ, սակայն, մեն մի պարբերությամբ և ընդհանրապես բառադարձ
կղուզնթանար Գուլամիրյանի հետ»¹⁴: Մինչդեռ, իրականում, լեզվա-ոճական
առանձնահատկություններով իրար հետ նույնական են վենետիկյան A և B
ձեռագրերը, ինչպես հավաստիորեն ցույց են տալիս բնագրային վերոբերյալ
ընդհանրությունները, իսկ Գուլամիրյանի հրատարակությունը առանձնանում
ու տարբերվում է այդ երկուսից էլ: Նկատենք, որ բնագրային մերձությունը
նշված բնույթի տեքստային երեք տարբերակներում որոշելու համար վճռա-
կան նշանակություն ունի ոչ թե ծավալային հարաբերակցությունը, որի վրա
հենվում է Ե. Փեչիկյանը, այլ բացառապես նրանց լեզվա-ոճական համա-
պատասխանությունը. քանի որ ծավալային տեսակետից B և C տարբերակ-
ները հիմնականում նույնական են. միակ հավելումը, որ ունի C տարբերա-
կը, բնագրի վերջում՝ զորապետների թվարկումից առաջ եղած 5—6 տողանոց
ընթերցումն է. համեմատի՛ր.

¹⁴ «Մաղմալեպ», էջ 179:

B տարբերակ

«Այլ դտան անօրէնք ի մէջ ժողովրդեանն, որք ախտացեալ իսկ էին այսու ժոնտ ախտիւս անմիաբանութեան, ուստի իշխեցին սպանանել զառաջնորդն իւրեանց, և մերժել ի հասարակութենէ իւրեանց զողորմութիւնն աստուծոյ» (էջ 33)։

C տարբերակ

«Այլ դտանին անօրէնք ի մէջ ժողովրդեանն, որք ախտացեալ իսկ էին այսու ժանտ ախտիւս անմիաբանութեան. լիսն որոյ անօրէն խորհրդով՝ բնղունայն և սնոտի պատնառնօք իշխեցին սպանանել զառաջնորդն իւրեանց և մերժել զպարգևս և զողորմութիւնսն աստուծոյ ի հասարակութենէ իւրեանց, և եղեն կամաւ ստուկօ օտարաց որպէս և յառաջն, որք մինչև ցայժմ մնային ի իշխանութեան իւրեանց, եթէ սակաւ ինչ ես ժամանակ ժուկալեալք էին. մինչև անցանիցէր բոնորիւն օսմանցոց. մանաւանդ զի աստուած օգնական էր նոցա յամենայն պատերազմունս. և զի ոչ պակասին նոցա անոռիկ և ամուր տեղիք» (էջ 33—35)։

Փեշիկյանի այն հայտարարութիւնը, որ B տարբերակը «Մխիթարյան հայրերի» կոլեկտիվ գրառման արգասիք է՝ բնագրագիտական տվյալներով չի ապացուցվում և, հարկ է ասել, առհասարակ անհնար էլ է ապացուցել։ Անվիճելի իրողութիւնն այն է, սակայն, որ իրականում առկա է միայն մեկ գրառող՝ հանձին Առկաս Սեբաստացու, որը ստեղծել է երկու տեքստ Դավիթ Բեկի գլխավորած Սյունիքի ազատագրական շարժումների պատմությունն ընդգրկող՝ համառոտ և ընդարձակ տարբերակներով. իսկ C տարբերակը ոչ թե այդ շարժումների պատմության նոր գրառում է, ինչպես կարծում է Փեշիկյանը, և վերջինիս անվերապահ կրկնում է Աբրահամյանը, այլ ընդարձակի վերջնական խմբագրումն է Մխիթարյան գիտնականների կողմից՝ այն հրատարակության պատրաստելու համար։ Ընդ որում՝ առկա բոլոր ձևագրական ընդօրինակությունները բխում են հենց այս C տարբերակից։ Նշանակում է՝ Դուլամիրյանը խելամիտ է վարվել հրատարակության համար հիմք ընդունելով հենց C տարբերակի ընդօրինակություններից մեկը։

Բացի վերը նշվածից, C տարբերակի լեզվա-ոճական մշակման ենթարկված, հրատարակության համար խմբագրված լինելու կարևոր ցուցանիշներից է նաև բնագրական ձևավորումը։ Այսպես, եթե A տարբերակն ունի միայն մեկ ընդհանուր վերնագիր՝ «Թե որպէս ի վտարիլ թագաւորութեանն պարսից հայքն խափանու ի կռիւ ելին», իսկ B տարբերակը անմիջապես սկսվում է «Գլուխ առաջին»-ով՝ «Թէ որպէս և վասն է՞ր եղև մուտն Դաւթի Բէկին ի Ղափան. և թէ զիա՞րդ ելին միաբան ընդ նմա բնակիչք գաւառին և ընդդէմ դարձան թուրքաց» խորագրով, ապա C տարբերակը օժտված է և՛ ընդհանուր վերնագրով, և՛ ևրեք գլուխներով ու առանձին հատվածով, որոնք համապատասխանաբար բացահայտող վերտառութիւններ ունեն։

Ավելին. եթե A և B տարբերակներում պարբերությունները միապաղաղ հարակցությամբ իրար են հաջորդում՝ դժվարացնելով ընթերցումը, ապա C տարբերակը սահմանադատվում է առաջին երկուսից պարբերությունների համարակալմամբ ու ամեն անգամ նոր տողերի սկզբնավորմամբ, որոնք հեշտացնում են, բնականաբար, ընկալումն ու ընթերցումը։

Ոչ սլակաս հատկանշական է և այն, որ A և B տարբերակները, ունենալով թերի տիտղոսաթերթ, չեն պահպանել մատենագիտական կարևորագույն տվյալներ, որոնք լույս սփռելին սկզբնաղբյուրի ստեղծման հանգամանքների ու արժանահավատության վրա: Մինչդեռ C տարբերակը օժտված է ծավալուն տիտղոսաթերթով, որում արտացոլված են ոչ միայն պատմագրության էական՝ բնորոշող բովանդակությունը, այլև Այունիքի շարժումներին մասնակցած ականավոր դործիչների անունները, որոնք առաջին դեմքով և ակաճատեսի հավաստմամբ հուշասպասմել ու թելադրել են այն:

Հետևաբար՝ բնագրագիտական միակ վավերական եզրակացությունը կլիներ այն, որ C տարբերակը չի բխում ո՛չ B, ոչ էլ, առավել ևս՝ A տարբերակներից. այն, ըստ էության, բնագրային առանձին տարբերակ է: Նշանակում է՝ վերը մեր հիշատակած և ուրիշ առանձնահատկությունների հաշվառման դեպքում անշուշտ անհարիր պնդում պիտի համարել Ե. Փեչիկյանի այն ենթադրությունը, որ, իբր, «կասկած չի մնար որ Գուլամիրյանի ձեռագիրը Միլիթարյան Բ ձեռագրին մէկ օրինակն է...»¹⁵: Պրոֆ. Աբրահամյանը, սակայն, որդեգրելով Փեչիկյանի այս թյուր եզրակացությունը ևս, B տարբերակի և Գուլամիրյանի հրատարակած բնագրի հարաբերակցության մասին ստեղծում է մի վիճակ, որից զժվար է զուրի հանել: Փեչիկյանի վերոհիշյալ քաղվածքը բերելուց հետո՝ համակարծիք լինելու տրամադրությամբ, շարունակության մեջ, սակայն, որպեսզի ցույց տա, թե ինքը ևս ուսումնասիրել է «Հնտիր պատմութեան» ձեռագրական բոլոր ընդօրինակությունները, Աբրահամյանը գրում է. «Ոչ միայն Գուլամիրյանցի և Վենետիկի հնագույն ձեռագրի, այլև Գուլամիրյանցի բնագրի և մյուս ձեռագրերի բնագրերի մեր կատարած ուսումնասիրությունից պարզվեց, որ նրանք էպես չեն տարբերվում իրարից (sic!) և պատմական առանձնապես կարևոր շեղումներ և տարբերակներ չունեն (sic!)...»¹⁶: Ինչպես տեսնում ենք, այստեղ պրոֆ. Աբրահամյանի բնագրագիտական պնդումները օգուտ առկախ են մնում, որովհետև դրանք չեն փաստարկվում համապատասխան հիմնավորումներով:

Բնագրագիտական արժեք չունեցող վերոբերյալ պնդմանը կարևորություն չի ընծայում նաև ինքը՝ այդ տողերի հեղինակը, երբ հանդես է գալիս «Պատմա-բանասիրականի» էջերում՝ թույլ տալով բանասիրական մի անսխիշտ պնդում ևս: Այս անգամ, մեղանշելով դիտական ճշմարտության դեմ, նա ամեն կերպ վարկաբեկում է Գուլամիրյանի հրատարակությունը, որպեսզի բարձրացնի «նախադադարի» արժեքը..., հայտարարելով, թե (որքան էլ տարօրինակ է!) արժանահավատ է ոչ թե Գուլամիրյանի հրատարակությունը, այլ... «նախադադարը»: Այդպես էլ գրում է նա. «Ինչու դեպքում, Այունիքի ազատագրական շարժումների պատմությունը բազմակողմանի և նշմարտացի ներկայացնելու համար անհրաժեշտ է դիմել ոչ թե Գուլամիրյանցի հրատարակած «Ընտիր պատմութեանը», որը հետագայի խմբագրված բրնագիր է. այլ՝ Սերաստացու նորահայտ ինքնագիր բնագրին...»¹⁷:

¹⁵ Նույն տեղում, էջ 179:

¹⁶ «Բանրեր Հայաստանի արխիվներ», էջ 87:

¹⁷ «Պատմա-բանասիրական հանդես», էջ 162:

Մի՞թե տարօրինակ չէ, երբ Գուլամիրյանի հրատարակած բնագրի անուրանալի արժանիքներն ու առավելությունները դիտմամբ արժեքազրկելով՝ պրոֆ. Աբրահամյանը վերագրում է դրանք նախագաղափար անմշակ բնագրին, սևով սպիտակի վրա գրելով. «Մեր ձեռքի տակ է այժմ Ղուկաս Սեբաստացու նախագաղափար այդ բնագրի մեքենագիր օրինակը, որը և հանձնում ենք հրատարակության: Թե՛ նա ինչ տարբերություն ունի մեզ հայտնի բնագրից և պատմագիտական ինչ արժեք է ներկայացնում. այդ դժվար չէ տեսնել Դյուլամիրյանցի բնագրի հետ համեմատությամբ: Մեր կարծիքով, նրա առավելությունն ու կարևորությունը անառարկելի է: Նա հնարավորություն է բնածեղում մեզ լուծելու հայագիտության մեջ Սյունիքի ազատագրական շարժումների հետ կապված մի շարք վիճելի հարցեր՝ բուրժուական բանակի Սյունիքի վրա հարձակվելու տարեթիվը, Դավիթ Բեկի և Մխիթար սպարապետի մահվան թվականները, օգնում է հշտելու բազմաթիվ տեղանուններ, որոնք և նշվում են ծանոթագրությունների մեջ և այլն»¹⁸: Զարմանում ես՝ ինչպե՞ս կարելի է բացարձակապես անհարիր ու սխալ պնդումներին հավաստիության պատրանք վերագրելու համար «անառարկելիության» վստահություն հաղորդել իր տողերին: Եթե մի պահ ընդունենք, որ, իրոք, այդ այդպես է, այս բոլորը բանասիրական ձեռնածություն չէ, ապա ինչո՞ւ բնագրագիտական համարյա բոլոր ուղղումները հեղինակը առաջադրում է ոչ թե նախագաղափար ձեռագրից, այլ (չզարմանաք!)՝ իր կարծիքով Գուլամիրյանի հրատարակության հիմքում ընկած վենետիկյան ընդարձակ ձեռագրից... (համտ. «Պատմա-բանասիրական հանդես», էջ 179, 180, 181, 182 և 183):

Նախ, ընդհանուր կարգի մի դիտողություն՝ մեթոդական բնույթի: Եթե Գուլամիրյանի հրատարակությունը, տեքստային խմբագրման առումով, չի բխում ո՛չ B տարբերակից, ոչ էլ, առավել ևս՝ A տարբերակից, իսկ մյուս ձեռագրական ընդօրինակությունները հարազատ քույրերն են հենց Գուլամիրյանի հրատարակության հիմքում ընկած ձեռագրի, ապա համարժեք համեմատելիներն են, բնագրագիտական տեսակետից, ո՛չ թե A և B տարբերակները Գուլամիրյանի հրատարակության հետ, այլ ձեռագրական մյուս բոլոր ընդօրինակությունները: Հետևաբար տեքստային ստուգազույն և սպառիչ ուղղումները Գուլամիրյանի հրատարակած բնագրի նկատմամբ կարող են տրամադրել (և իրոք տրամադրում են) միայն նրա ճյուղավորումները հանդիսացող բոլոր ձեռագրերը: Այդ պատճառով էլ պրոֆ. Աբրահամյանի առաջարկած «ուղղումները» բնագրագիտական արժեք չեն ներկայացնում գիտաբանական տեքստի պատրաստման համար, բայց և այնպես ոչ մասնագետ ընթերցողի համար դրանք անշուշտ տպավորիչ են...

Միտումնավոր է պրոֆ. Աբրահամյանի՝ երկու հոգվածներում էլ կիրառած հակադրության մեթոդը՝ կանխակալորեն այս կամ այն հրատարակությունը և կամ նրա հեղինակին նսեմացնելու նկատառումով:

Այսպես, հակադրելու ի՞նչ կարիք կա Գուլամիրյանի հրատարակությունը A կամ B տարբերակներին՝ սխալ մեթոդով կատարած իր «ուղղումների» ցուցադրման նպատակով: Ո՞ւմ հայտնի չէ, որ Գուլամիրյանի հրատարակությունը ոչ թե բոլոր ձեռագրերի համադրությամբ իրականացված գիտա-ֆենակյան բնագիր է (Գուլամիրյանը երբեք այդպիսի հավակնություն չի էլ ունե-

¹⁸ «Բանբեր Հայաստանի արխիվներին», էջ 88—89:

ցել), այլ՝ բնդամենը մի ձեռագրի պարզ արտատպություն, ընդ որում այդ ձեռագրի բոլոր թերություններով ու առավելություններով հանդերձ: Բայց դեռևս 1871 թ. մատենագրական այս հուշարձանի սոսկական հրատարակությունը Ա. Գուլամիրյանի շնորհակալ ծառայությունն է հայագիտությանը, որով Սյունիքի ազատագրական մաքառումների պատմությունը ողբշնչման աղբյուր ծառայեց վիպասանության, երաժշտության, բեմական արվեստի, կինոյի համար:

Այսպես, մի դեպքում՝ Դավիթ Բեկի զորավարներից Ստեփանոս Շահումյանի և նրա զինակիցների պատումների արժանահավատությունը պսակագերծելու գիտումով պրոֆ. Աբրահամյանը զրուցում է. «Կարելի է Սեբաստացու բնագրում մատնացույց անել այլ թերություններ և պակասություններ ևս, սակայն բերված փաստերը, կարծում ենք, բավական են հանդելու այն եզրակացության, որ միայն Սեբաստացու գրի առած բնագրի հիման վրա չի կարելի կազմել Սյունիքի ազատագրական շարժումների գիտական պատմությունը...»¹⁹: Իսկ ո՞վ ասաց, թե «միայն Սեբաստացու գրի առած բնագրի հիման վրա կարելի է կազմել Սյունիքի ազատագրական շարժումների գիտական պատմությունը»: Ամեն մի վավերագիր, փաստաթուղթ կամ հիշատակություն լրացուցիչ իր արժեքն ունի հետազոտողի համար: Բայց մատենագրական այս հուշարձանը այնպիսի թանկագին սկզբնաղբյուր է, որի արժանահավատությունը ընդդժվում է թեկուզև նրանով, որ այն թելադրել են ազատագրական այդ շարժումների բուն իսկ մասնակիցները, ընդ որում՝ ականավոր մասնակիցները: Մի՞թե այս իրողությունից հետո կարելի է ասել՝ «Շատ կցկտուր, դեպքին անձանոք մաքրու լեզվով է նկարագրված Հալիձորի նշանավոր ճակատամարտը թուրք նվաճողների դեմ»:

Մի այլ դեպքում, համերաշխելով ակադ. Ա. Հովհաննիսյանի հետ, հենց Գուլամիրյանին դատափետելու համար Աբրահամյանը մեղադրում է նրան «անբարեխղճության» ու «փաստեր խարդախելու» մեջ: «Աղբյուրագիտական առաջին հարցը, — զրուցում է Աբրահամյանը, — որ ծառանում է տվյալ բնագիրը ուսումնասիրողի առջև, այդ այն է, թե որքա՞ն բարեխղճ է գտնվել Գուլամիրյանցը բնագրի հրատարակության խնդրում, չկա՞ն արդյոք առանձին աղավաղումներ: Այս ճարտի ուսումնասիրությանը զբաղվել է ակադ. Ա. Գ. Հովհաննիսյանը «Դավիթ-Բեկի զլխավորած Ղափանի ապստամբությունը» խորագրով իր հոդվածում: Համեմատելով Գուլամիրյանցի հրատարակած բնագիրը ձեռագրի հետ, նա մատնացույց է արել Գուլամիրյանցի կողմից բնագիրը խարդախելու մի քանի փաստ»²⁰: Սակայն նախ ասենք, որ հանդուցյալ ակադ. Հովհաննիսյանը հիշյալ իր հոդվածում «աղավաղումների հարցի ուսումնասիրությամբ» հատուկ չի զբաղվել՝ շունենալով այդպիսի և ոչ մի հավակնություն. բայց այդ առթիվ Ա. Գուլամիրյանի վերաբերյալ թույլ է տվել կանխակալ վերագրումներ, որոնք բնագրագիտական հանգամանալից ստուգման ու հաստատման կարիքն ունեն: Այդ բանը չի արել նաև Ա. Աբրահամյանը:

Թանն այն է, որ ակադ. Հովհաննիսյանի սխալ վերագրումները բխում են նրանից, որ նա սկեռուն կարծիք է ունեցել Գուլամիրյանի ճշտաբանության

¹⁹ Նույն տեղում, էջ 91:

²⁰ Նույն տեղում, էջ 86:

հիմնում բնկած աղբյուրը համարելու հենց իր սևփականությունը հանդիսացած ձեռագիրը, ըստ որում՝ բոլոր այն դեպքերում, երբ շեղումներ են լինում ընթերցումների միջև՝ համարել է դրանք «աղավաղումներ» ու «խարդախումներ», նույնիսկ «դավանաբանական նենգափոխումներ», իսկ Գուլամիրյանի հրատարակության մեջ բաց թողնված առանձին տողերն ու բառակապակցությունները, իբր, ցառական ցենզուրայի արգելման արդյունք...: Ինքնին հասկանալի բնադրային այս տարրնթերցումները ձեռագրերի միջև՝ Ա. Աբրահամյանի համար, իբրև աղբյուրագետի, թվում է թե ըմբռնելի պետք է լինեին:

Արդ, որո՞նք են «բնագիրը խարդախելու մի րանի փաստերը»:

Առաջին. Աշ. Հովհաննիսյանի «ձեռագրում ասվում է,— գրում է Ա. Աբրահամյանը,— որ Շահնավազը ընդառաջելով Շահումյանցի խնդրանքին՝ «...կոչեալ զԴավիթ պէկն Մծխիթացի ի Հայկազեան տոհմէ, ետ նմա իշխանութիւն երթալ յաշխարհն Սիւնեաց, որ այժմ կոչի խափան»: Գուլամիրյանցը, Դավիթ Բեկին սյունեցի տեսնելու ցանկությամբ տարված. այդ բնագիրը փոխել է հետևյալ կերպ. «և կոչել զԴավիթ բէկն Սիւնեցի ի Հայկազեանս տոհմէ, ետ նմա իշխանութիւն երթալ յիւր հայրենի յաշխարհն Սիւնեաց, որ այժմ կոչի խափան» (էջ 5)²¹: Զարմանալի ի՞նչ կա այստեղ. ոչ միայն Աշ. Հովհաննիսյանի ունեցած ձեռագիրը, այլև Մատենադարանի ԱՆ 4598, 6835 ձեռագրերի և միկրոֆիլմ Ն 250-ի ընթերցումները ունեն միևնույն՝ «մծխիթացի» տեղանունը: Առավել բնական է ենթադրել, որ Գուլամիրյանի հրատարակության հիմքում ընկած ձեռագրում «սիւնեցի» բառը եղած լիներ «մծխիթացի» բառի փոխարեն: Ինչո՞ւ անպայման հետին միտք վերագրել հրատարակչին. չէ՞ որ ձեռագրերից երկուսն էլ (ԱՆ 6835, 10579) ունեն ճիշտ ու ճիշտ Գուլամիրյանի հրատարակած բնագրի՝ «յիւր հայրենի յաշխարհն Սիւնեաց» ընթերցումը, որը ենթադրում է նաև «սիւնեցի» ընթերցման հնարավորությունը՝ անկախ Գուլամիրյանի ցանկությունից, մանավանդ որ ոչ այլ ոք քան հենց Աբրահամյանը հատուկ ջանքեր է գործադրել և մի ամբողջ հատված է նվիրել (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», էջ 165—168) Դավթի «սյունեցի» լինելը ապացուցելու համար...

Երկրորդ. Աշ. Հովհաննիսյանին պատկանած «ձեռագրի այն տեղեկությունը, որ Սյունիքում աղատագրական շարժումները վերջանալուց հետո Տեր Ավետիքը, մեղքերը քավելու համար, իբրև թե գնում է Հռոմ թողութուն խնդրելու պապից, Գուլամիրյանցը լուսավորչական դավանանքի պատկանող Կեղեցականի համար այդ համարելով անպատվաբեր. Տեր Ավետիսին «մեղաց թողութուն» խնդրելու համար ուղարկում է Երուսաղեմ Հայոց պատրիարքի մոտ»²²:

Այս հարցի վրա ուղում ենք կանգ առնել առավել հանգամանորեն:

Սկզբից ևեթ նշենք, որ Գուլամիրյանի հրատարակությունից տարբեր, բայց Աշ. Հովհաննիսյանի ձեռագրին համընկնող ընթերցում ունեն նաև ձեռագրական մյուս ընթերցումները (տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարանի ՆՆ 3297, 6835 ձեռագրերը և Ն 250 միկրոֆիլմը. ընդ որում՝ Աշ. Հովհաննիսյանի ձեռագրում հետնագույն ժամանակներում ռետինով ջնջել են այդ ընթերցումը՝ փոխարենը ոչինչ չգրելով (տե՛ս թ. 49ա): Սակայն ուշագրավն

²¹ Նույն տեղում, էջ 86—87:

²² Նույն տեղում, էջ 87:

այն է, որ դեռևս Ա. Գուլամիրյանը, իր տրամադրության տակ չունենալով ձեռագրական այլ տարբերակներ, բայց նկատելով, որ Մ. Չամչյանի «Պատմության» մեջ խնդրո առարկա ընթերցումը բոլորովին այլ կերպ է վերաշարագրված, բան իր հրատարակության համար հիմք ծառայած ձեռագրինը, ծանոթագրության մեջ զարմանք է հայտնում, թե որտեղից է վերցրել երախտավոր պատմաբանը նման տեղեկությունը. «Պարմանա՞մբ, քէ Հայր Միֆայէլ վարդապետն Չամչեանց (հատ. Գ. գլ. ԽԹ, երես 800), ուստի՞ զիտացեալ՝ կամ յո՞րպիսի աղբւրաց առեալ՝ վստահանայ ինքնաստեղծ պատմութեամբ յօրինել,— զրում է նա,— զնոր իմն սովորութիւն Ազգիս, զրելով ի պատմագրութեան իւրում՝ թէ. «Իսկ Տէր Աւետիքն առեալ զընտանիս իւր՝ չոգաւ ի Գաղատիա, և անտի գնացեալ յարեմոտս, էառ զներումն ի Մայրագոյն Քահանայապետէն Հռովմայ. վասն մղելոյ նորա զայնչափ պատերազմունս ի Քահանայութեան իւրում...»²³:

Իհարկէ՝ Գուլամիրյանին հայտնի չի եղել, որ B տարբերակի ձեռագրում առկա է հենց այն ընթերցումը, որը և հիմք է ծառայել Մ. Չամչյանի համար: Եթե վիճելի ընթերցման այն փոփոխակը, որ առկա է հրատարակության մեջ, հենց Գուլամիրյանի միջամտության ու դիտումնավոր «խարդախման» արդյունք լիներ, ապա անհասկանալի կլիներ հրատարակչի անկեղծ զարմանքը, որը միայն ձևարարությունը բացահայտող պատասխան ակնկալելու բնույթն ունի, և ո՛չ՝ սեփական կեղծիքի կոծկում, ինչ որ անհամոզիչ է նման պարագայում:

Ի լրումն ասվածի, առաջագրված հարցի առնչությամբ բնագրային մի փոփոխություն ևս առկա է Գուլամիրյանի հրատարակության մեջ, որին ուսումնասիրողներին ոչ ոք չի անդրադարձել: Այսպես, կարևոր է նշել, որ Գուլամիրյանի հրատարակության մեջ ոչ միայն տեղանունն է փոխվել՝ «Դաղատիան» դարձվելով «Նրուսաղեմ», այլև Տեր Ավետիսին վերաբերող ամբողջ բնութագիրը, Հալիձորի զորավար Փարսաղանի մասին արված հիշատակության հետ միասին, բնագրի վերջավորությունից առաջ է տարվել և մոծվել Սիմեոն զորապետի հիշատակումից անմիջապես հետո: Նշանակում է՝ արված է նաև բնագրային «վիրահատություն» (համեմատի՛ր A տարբերակ՝ էջ 29, B տարբերակ՝ էջ 35, Գուլամիրյանի հրատ.՝ էջ 76—77): Այդ իսկ պատճառով Գուլամիրյանի հրատարակության մեջ զանց է առնված հեղինակային տարբերակներում զորապետ Տեր Ավետիսին ձոնված ներբողական բանաստեղծությունը, որով ավարտվում է Դավիթ Բեկի գլխավորած շարժման հերոսապատումը. րնդսմին այդ շարժումի հեղինակի մասին արված է այսպիսի նշում՝ «Որպէս և ոմն յարգելի երիցանց անտի դրեաց առ նա զայս ոտանաւոր առ նոյն յորդոր» (տե՛ս A տարբերակ, էջ 29, B տարբերակ, էջ 35):

Ինչո՞վ բացատրել բնագրային այս կարգի փոփոխությունները. արդյո՞ք անզգուշության կամ տեխնիկական վրիպման հետևանք են դրանք, թե՞ իրենց հիմքում ունեն դավանաբանական նկրտումներ, որոնք, բնականաբար, ամենեվին չեն վերաբերում բնագրեր հրատարակելու գիտական պահանջներին:

Կարծում ենք, որ այս կարգի փոփոխությունները պայմանավորված են դավանաբանական հակամարտ նկրտումներով, երբ բնագրի ընդօրինակ-

²³ «Ընտիր պատմութիւն Դաւիթ Բեկին և պատերազմաց Հայոցն Խափանու...», Վաղարշապատ, 1871, էջ 70:

ման ժամանակ լուսավորչադավան մի գրիչ իր դավանանքի ջերմեռանդությու-
նից մղված կատարել է բնագրական նշված փոփոխությունները: Հենց դրա-
նով պետք է բացատրել նաև այն աղաղակող փաստը, որ Գուլամիրյանի հրա-
տարակության համար հիմք ծառայած ձեռագրում դիտավորությանմբ ջնջվել
է գրառողի անունը՝ թողնելով միայն ոչինչ չասող «վարդապետի» բառաձևը:

Այն, որ իրոք Տեր Ավետիսը եկել է Հոռմ, և ոչ թե Երուսաղեմ, կողմնա-
կիորեն ապացուցվում է նաև նրանով, որ նրա զինակիցներից շատերը Ստե-
փանոս Շահումյանի պիսավորությանմբ արդեն ժամանել էին Իտալիա և Վե-
նետիկի սբ. Ղազար վանքում միասնաբար, փոխադարձ լրացումներով հա-
ղորդել Ղուկաս Սեբաստացուն դավիթբեկյան հերոսապատումը: Երկրորդ՝
Մ. Ավգերյանը վենետիկյան ընդարձակ բնագիրը ցանկագրելիս հակառե-
անվանն հիշատակում է, որպես զեպքերի ու իրադարձությունների զլխավոր
մասնակից, ականատես ու պատմող՝ Տեր Ավետիսին: Երրորդ, որ առավել
կարևոր փաստարկ է, Տեր Ավետիսի Գաղատիայում և Իտալիայում գտնվելու
մասին տեղեկություն է հաղորդում այս սկզբնաղբյուրը պարփակող վաղա-
գույն ձեռագրերից մեկը, որը ենթադրում է ժամանակակցի վկայություն.
ընդամենը Դավիթ Բեկի մահվանից 31, իսկ սկզբնաղբյուրի հեղինակումից
22 տարի հետո Ամստերդամում արտագրված գրչագրում Հովակիմ Ռաֆայել-
յան²⁴ Ղափանցին իր թողած հիշատակարաններում նույնպես արժարժում է
Տեր Ավետիսի՝ Երուսաղեմ, թե՛ Հոռմ գնալու խնդիրը՝ որպես դավանաբանա-
կան կարևոր հարց: Հիշատակարանից ամենայն ափսոսանքով բացահայտ
է դառնում, որ զրիչը լուսավորչադավան է, բայց և այնպես հարկադրաբար
արձանագրում է փաստը՝ ըստ բնագրի հավաստման՝ գրելով. «...հանդերձ
ընտանեօքն փախստական լեալ (Տէր Աւետիսն—լ. հ., Ղ. հ.) զա հասանի
ի յերկիրն Գաղատիա, և անդ ենքարկեալ ընդ հրամանօքն Պապին (ընկալնոյր
զներումն մեղանացն)»²⁵: Եվ որովհետև ձեռագրի ընդօրինակման ժամանակ՝
1759 թ., գրառողը 8 տարի առաջ արդեն վախճանված է եղել, ուստի Հովա-
կիմ Ռաֆայելյանը անգիտանալով նրա անունը՝ ափսոսանք է հայտնում, որ
չի կարող դիմել նրան, որպեսզի վերջինս պատասխաներ տարակուսանք հա-
րուցող տողերի համար՝ թե ինչո՞ւ Հոռմի պապից Տեր Ավետիսը ներումն է
խնդրել: Բայց որովհետև բնագրում հաղորդվածից բացի ուրիշ որևէ հիմք
չունի գրիչը՝ դատափետում է Տեր Ավետիսին ամենաբացասական և ծայրա-
հեղ բնութագրումներով, քանի որ նա, ըստ գրիչի, «առաջին սրբությունը (իմա՝
լուսավորչադավանությունը) անարգել է պապից ներումն խնդրելու պատճա-
ռով...»²⁶: Դառնություն ու հիասթափության ներքին ցավով գրիչը ուրանում
է նույնիսկ, որ Տեր Ավետիսը երբևէ եղել է լուսավորչադավան, այն էլ՝ քահա-
նա..., ուստի և զայրությանից պոռթկում է. «Ե՛լ ի մէնջ, ալլ ո՛չ էր ի մէնջ, զի
երէ ի մէնջ էր, մնայր առ մեզ...»²⁷:

Սակայն Ա. Գուլամիրյանը առավել լայնախոհ և ազնիվ մտավորական էր,
քան նրան անհարկիորեն մեղադրողները կարծում են: Բավական է այս առթիվ
հիշատակել մի փաստ ևս. հրատարակիչը ձեռագրի տիտղոսաթերթում ջնջված

²⁴ Ի դեպ, այս գրիչի ազգանունը, ըստ Լրևույթին վրիպակի հետևանքով, տպված է
«Սաֆայելյան» (տե՛ս «Բանրեր Հայաստանի արխիվների», էջ 86):

²⁵ Հենինգրադի Արևելագիտական ինստիտուտի հայկական ձեռագրերի ֆոնդ, Բ—129, թ. 61ր:

²⁶ Նույն տեղում:

²⁷ Նույն տեղում:

տեսնելով գրառողի անունը՝ արդարացի խստությամբ դատափետում է այն կատարողներին, իբրև «անխոհեմ և անզգայ մարդիկ»։ Ընդամին՝ անկեղծությամբ խոստովանում է միաժամանակ, որ իր ճիգերը ապարդյուն են եղել պատմագրական աղբյուրներում պարզելու տմարդիորեն ջնջված գրառողի անունը։ «Բայց ցաւում ենք շատ,— ասում է նա,— որ չկարողացանք գտնել այս ազնիւ Պատմագրութեան բուն հեղինակը, պատճառ անխոհեմ և անզգայ մարդիկ անհետացրել են այս ազնիւ հեղինակ վարդապետի անունը, ջնջելով նորա անունը և տոհմանունը միմիայն Վարդապետ բառը թողլով, ինչպես մենք ևս թողուցինք ահա, որի համար շատ տեղեր և պատմագրութիւններ փնտրելով. չկարողացանք և ոչ մի տեղ գտնել ծանօթութիւն ինչ գտնել»²⁸։

Երրորդ. «Հովհաննիսյանը նշել է նաև Գյուլամիրյանցի բնագրի երկու տեղում ցարական ցենզուրայի կողմից կրճատելու փաստ»²⁹,— գրում է Ա. Աբրահամյանը, բայց ինքը, իբրև բնագրագետ, խորամուխ չի լինում դրա մեջ՝ Գյուլամիրյանի ամբողջ աշխատության տեսանկյունից։ Իրականում՝ դրանք ևս հիմք-ձեռագրի անընթեռնելիության կամ մաշվածության պատճառով Գյուլամիրյանի հրատարակությունում բաղմակետերով են նշված իբրև բացթողումներ, մի դեպքում էլ՝ կիսատ նախադասության տպավորություն է թողնում։ Քույր ձեռագրերի օգնությամբ վերականգնենք և զուգադրենք դրանք։

Գյուլամիրյանի հրատ.	Մեր կազմած գիտա-մենական բնագիրը
1. «Զի՞նչ մեծագոյն բան գկայսերութիւնն Մակեդոնացւոց և Հոռմայեցւոց. և ընդէ՛ր կորեան և կործանեցան. վասն զի պակասեցաւ ի նոցանէ Միարանութիւնն և Սէրն հասարակութեան, որով և դօրացեալ իսկ էին.»	«Զի՞նչ մեծագոյն բան գկայսրութիւնն Մակեդոնացւոց և Հոռմայեցւոց. և ընդէ՛ր կորեան և կործանեցան. վասն զի պակասեցաւ ի նոցանէ Միարանութիւնն և Սէրն հասարակութեան. որով և դօրացեալ իսկ էին. ոհոէ՞ր եղև և կործանումն Ազգին մերոյ. երկրին մերոյ և քաղաւորութեանն: Վասն զի բաւձաւ միաբանութիւնն յիշխանաց և ի նախարարաց մերոց: Զի որպէս միարանութիւն հոգի է և կեանք ամենայն հասարակութեան, նոյնպէս և հակառակն սորին, աշխիքն անմիարանութիւնն եղծիչ է, և սատակիչ ամենայն հասարակութեան» (էջ 73)։
2. «Եւ եղևն կամաւ ստրուկ ստարաց որպէս և յառաջն, որք մինչև ցայժմ մնացին եթէ սակաւ ինչ ևս ժամանակ ժուժկայալք լին» (էջ 75)։	«Եւ եղևն կամաւ ստրուկ ստարաց որպէս և յառաջն, որք մինչև ցայժմ մնացին ի յիշանութեանն իւրեանց. եթէ սակաւ ինչ ևս ժամանակ ժուժկայալք լին»։

Սակայն ընդգծված բացթողումներում, ինչպես ընթերցողը կնկատի, ավելի բնագրային թերափարտություն կա, քան բաղաքական սրություն։ Ի դեպ, «միասնականության» և «համազգային սիրո» բուրժուական գաղափարախոսության դեղատոմսը, որ առկա է բացթողումներում, Ա. Գյուլամիրյանը լայնորեն շեփոթում է նաև իր Առաջարանում ու Հավելվածի նյութերում, բայց ուսական ցենզուրան հանդուրժողաբար թույլատրել է...։ Գյուլամիրյանը նույնպես, իբրև «Երրորդ յաւելում», աղղային առկա փճակին նվիրված չափածո

28 Տե՛ս «Քնտիր պատմութիւն...», էջ Ժ։
29 «Բանբեր Հայաստանի արխիվներին», էջ 87։

«Ողբ» է զետեղել, ինչպես և գրել է այսպիսի տողեր. «Մեր ընդհանուր Հայոց Ազգի այժմեան և ապագայ վիճակը մանրամասնաբար դիտելու ժամանակ՝ յիշուի, չեմ կարծում որ ամեն ճշմարիտ Հայ աշխարհը՝ արտասուաց կաթիլները հեղեղի նման վազելէն պիտի դադարին,— պատճառ, եթէ ճշմարիտ սրտով նայենք նրանց վերայ և մարդկային իրաւունքով դատենք, ո՞հ, այն ժամանակը անշուշտ կատաղութիւններ և ցնդումներ պիտի յառաջ գան...» (էջ 89)։ Կամ՝ «...որքան խորհում եմք, այնքան առաւել բազմանում են և դիզվում մեր առաջ ազգիս անտանելի ցաւերը և մտածմունքը, վերջապէս դառն է և ողբալի մեր վիճակը, ո՞հ, դառն է և ողբալի՝ մեր վիճակը կրկնում եմ ես...» (էջ 102)։ Սրանք քաղաքական առավել սուր արտահայտութիւններ են, քան բաց թողնելոված գրաբարյան տողերը...

Որպեսզի «ակներև դարձնի» Ա. Գուլամիրյանի իբրև թե «կամայականութիւններն» ու «միջամտութիւնները» բնագրի նկատմամբ՝ պրոֆ. Աբրահամյանը իր առաջադրած «ուղղումներում» ևս չի խնայում նրան։ Այսպես, էջ 4, տող 9. «Իսկ եթէ որով մարթասցի զհայեցուած իւր առաջի իշխանաց իշխանին արժանաւոր ցուցանել, խորհեցաւ գիրս յանուն յիսուն արանց տանուտերանց հափանու յօրինել...»։ Խոսքը վերաբերում է Ստեփանոս Շահումյանցի՝ Շահնավազ խանին ներկայացրած գրութեանը։ Գուլամիրյանցի հրատարակած ձեռագրի խմբին պատկանող ընդօրինակութիւններում հանդիպում է ոչ թե «...խորհեցաւ գիրս... յօրինել», այլ՝ «խորհեցաւ սուտ գիրս... յօրինել»։ Գուլամիրյանցը, ըստ երևոյթին, անհաւատ համարելով, «սուտ» բառը դուրս է բողբել նախադասութիւնից» («Պատմա-բանասիրական հանդես», էջ 179—180)։ Բայց մի՞թե գրաբարի լավ գիտակ մարդուն կարելի է վերագրել այդպիսի անհեթեթութիւն։ Բանն այն է, որ սուտ բառի «բացթողմամբ» յօրինել և շարունակութեան մեջ, որ չի բերել Աբրահամյանը՝ «ըստ նմանութեան իւրաքանչիւր կնքոց նոցա զկնիքս Բանդակելի, և զայն գիր նոքօք կնքեալ հաստատել» (Գուլ. էջ 4) ընդգծված բառերը բողբում են նման վարկածի դեմ։ Ինչո՞ւ չի կարելի առանց բռնաձիգութեան մտածել, որ «սուտ» բառը պարզապէս չի ունեցել հիմք-ձեռագիրը, և հարցը կսպասվեր։ Չէ՞ որ ձեռագրական տարբերութեան համադրական քննութեամբ վերականգնվում են նման գրչագրական բացթողումները։

Անցնենք Աշ. Հովհաննիսյանի ձեռագրի և Գուլամիրյանի հրատարակութեան բնագրագիտական համեմատութիւններին, որոնք առավել հաւաստի և վավերական կովաններ են ուսույց եղրակացութիւնների հանգման համար։ Այդ ձեռագիրը այժմ գտնվում է Մատենադարանում և գրանցված է 10579 համարի տակ։ Մենք ամենայն մանրակրկիտութեամբ ուսումնասիրել և ընդգրկել ենք այն մեր կազմած գիտա-քննական բնագրում։ Բնագրական բոլոր առանձնահատկութիւններով այդ ձեռագիրը ըստ էութեան տարբերվում է Գուլամիրյանի հրատարակութեանից, հետևաբար և՛ բացառված պետք է համարել այն սխալ կարծիքը, ըստ որի, դա նույն ձեռագիրն է, որն, իբր, հիմք է ծառայել Գուլամիրյանի հրատարակութեան։

Սույն ձեռագրում կան բառեր ու բառակապակցութիւններ, որ չունի Գուլամիրյանը, ինչպես և առկա են բառաձևերի, շարադասութեան և ուղղագրական բնույթի խիստ տարբերութիւններ, որոնք իսպառ բացառում են դրանց նույնութեան հնարավորութիւնը։ Այսպես.

Ձև. 10579	Գույամիրյանի հրատ.
1. «ցքսան և մի երրորդ» (8ա)	«ցքսաներորդ» (էջ 14)
2. «սուտ գիրս» (3ա)	«գիրս» (էջ 4)
3. «ի վերայ արձակէին նորա»	«ի վերայ նոցա արձակէին» (էջ 17)
4. «էր ընդ կոտորեալսն նաև Պալի զօրավարն, որդի մելիք Փարսաղանին, որոյ զոլոյսն հատեալ ընկեցեալ էին, ի բացի մերձ ի խոտանան, բայց ոչ զրոլոր պարանոցն. ալ մինչ զկէս ուլանն: Ուստի...» (թ. 22ր):	«էր ընդ կոտորեալսն՝ նաև Պալի զօրավարն, որդի մելիք Փարսաղանին, որոյ պարանոցն կիսով չափ հատեալ ընկեցեալ էին, ի բացի մերձ ի խոտանան: Ուստի...» (էջ 41):
5. «ձայն փողոյ և ձայն դոսերաց» (թ. 26բ)	«ձայն փողոյ, և ձայն թմբկաց» (էջ 48)
6. «զայլս խոցս և զվիրաւորս հալածականս առնէին» (28բ)	«զայլս՝ խոցս, և վէրս ի վերայ դնելով՝ հալածականս առնէին...» (էջ 51—52)
7. «Արձաւարարին»	«Արձանարարին»
8. «Ի Հալիձոր երկրին» (41բ)	«Ի Հալիձոր երկիրն» (էջ 70)
9. «ոչ համարձակեցաւ» (28բ)	«ոչ համարձակեցաւ ելանել առժամ» (52)
10. «մինչդէռ ի վանսն էին նոքա սրբորոյն Թոմայի, արտաւոյ Բաղաբին, և սկսան ի Բաղաբի, անտի հրացանս արձակել ի վերայ զօրացն» (35բ)	«մինչդէռ ի վանսն էին նոքա սրբորոյն Թոմայի՝ անտի հրացանս արձակել ի վերայ զօրացն» (էջ 64):
11. «էին ի յաղգէն հայոց» (41բ)	«էին ի յաղգէ Հայոցս լուսաւորչական» (էջ 70):
12. «Եպիսկոպոսունք»	«Եպիսկոպոսունք Տաթևու»:
13. «Եւ եղեն կամաւ ստրուկ ալլազկեաց» (41ա)	«Եւ եղեն կամաւ ստրուկ օտարաց» (էջ 75)
14. «ընդդէմ եղև կործանումն ազգին մերոյ, երկրին մերոյ և քաղաւորութեանն: Վասն զի բարձաւ միաբանութիւնն և յիշխանաց և ի նախաբարաց մերոց...» (48ա)	
15. «ի յիշխանութեան իւրեանց» (41ա)	2իբ:
16. «Պանդխտեցաւ ի Դաղատիայ» (49ա)	2իբ:
17. 2իբ:	«Անուանեմ զօրապետին և զօրացն Դաւթի ի զանազան տեղիս» (76)
18. 2իբ:	«Առ ի մխրարել զազգն Հայոց ողջոյն» (էջ 75):

Ասկիւծին ավերացնենք նաև, որ Աշ. Հովհաննիսյանին պատկանած ձեռագրում կան բազմաթիվ ընթերցումներ, որոնք համապատասխանում են ոչ թէ Գույամիրյանի հրատարակության, այլ մեր օգտագործած № 4598, 3297, 6855 ձեռագրերին և № 250 միկրոֆիլմին, իսկ առավել մերձ՝ № 6835 ձեռագրին: Ուստի բոլոր հիմքերն ունենք ենթադրելու, որ այն բխել է հենց № 6835 ձեռագրից:

Որպես նմուշ բերենք նաև պրոֆ. Աբրահամյանի «Բնագրագիտական քննություն» կատարած «ուղղումներին» մի երկուսը, որոնք նպատակ ունեն Սյունիքի ազատագրական շարժման տեղումնությունը, չղիտես ինչո՞ւ, անպայման երևք տարով կրճատելու: Գույամիրյանի հրատարակությունը արժեքազրկելու նպատակով նա իր փաստարկները հետևյալ կերպ է «հիմնավորում».

«Դավիթ բեկի մահը, ըստ «Ընտիր պատմության» մեջ հաղորդված տեղեկություն, — գրում է նա, — տեղի է ունեցել 1728 թ.», ապա շարունակում է. «Ղուկաս Սեբաստացու նախագաղափար օրինակում Դավիթ բեկի մահվան տարեթիվը

մասին տեղեկությունը այլ է»։ Բնականաբար՝ ընթերցողը սպասում է, որ իր առաջադրելիք փաստը իրո՞ք այլ լինի։ Բայց ո՞վ զարմանք, առադրած վկայությունը ո՛չ մի այլ թվականի հետ աղերս չունի. «Այստեղ ասված է, — հարում է հոդվածագիրը, — «Եւ ի ժամանակի յայսմիկ մեռաւ Դաւիթ պէկն խաղաղութեամբ ի տան իւրում յամի տեսոն 1728 (այս փակադծում իր կողմից «ծանոթագրում» է՝ «28-ը մատիտով ավելացված» Լ. Խ., Հ. Խ.) ...ի յամսեան (ամսաթվի տեղը բաց թողած)»³⁰։ Ահա թե ի՞նչ. բայց չէ՞ որ «Բանբեր Հայաստանի արխիվներ» հանդեսում նույն ինքը Աբրահամյանը հայտնում է, որ իւր «ձեռքի տակ է այժմ Ղուկաս Սեբաստացու նախագաղափար այդ բնագրի մեմենագիր օրինակը», որը և հանձնում է հրատարակության (տե՛ս էջ 88)։ Այս դեպքում հարց է ծագում. այդ ո՞ր աղբյուրագետը երբեք կհանդգնի «մեմենագիր» օրինակի հիման վրա, այն էլ մատիտով համապատասխան նույն րվականը հիշատակված լինելու դեպքում՝ բնագրագիտական «ուղղում» առաջադրել։

Աբրահամյանը այնուհետև եզրակացնում է. «Այսպիսով պարզվում է (sic!), որ Դավիթ Բեկի մասին պատմագրողը հաստատ չի իմացել Դավիթ Բեկի մահվան ո՛չ տարին, և ո՛չ ամսաթիվը. հետևապես Սեբաստացու նախագաղափար օրինակի վրա խմբագրված ձեռագրերը (??), որոնցից ծագում է Գյուլամիրյանցի հրատարակության բնագիրը, մահվան րվականի մասին եղած տարեթիվը մեզ հաստատուն կովան ծառայել չեն կարող» (sic!):

Նկատենք, որ այս դեպքում ևս գրառողին ուղղված «մեղադրանքը» անհիմն է. եթե նախագաղափարի մեքենագիր օրինակի հիման վրա Աբրահամյանի կատարած եզրակացությունը մի պահ նույնիսկ «հավանական» համարենք, ապա չէ՞ որ պատմագրողը, բացի նախագաղափարից, շարադրել է նաև ընդարձակ՝ առավել ստուգված և հավաստի, մշակված բնագիրը, որի վկայությունը արդեն փարատում է ամեն տեսակի տարակուսանքներն ու կասկածները։ Ի՞նչ է գրված այնտեղ. «Եւ եղև ի ժամանակի յայնմիկ հիւանդանալ Դաւթի և մեռանել իսկ խաղաղութեամբ ի տան իւրում ի Հալիձոր, ամի տ(եառ)ն 1728-ին և ի րուին հայոց ՌՃՀԷ» (էջ 31)։ Բացարձակապես հար և նման Գյուլամիրյանի հրատարակության հավաստմանը...

Բայց այս բոլորը պրոֆ. Աբրահամյանի համար ոչ մի նշանակություն չունի։ Նա Դավիթ Բեկի՝ 1726 թ. մահացած լինելու «զորեղ» փաստերից է համարում նաև երևութական այն հանգամանքը, որ 1726 թ. Մխիթար Բեկի նախաձեռնությամբ Ռուսաստանի ցարին հղված ուղերձում Դավիթ Բեկի ստորագրությունը չի եղել...։ «Անկարելի է, որ Դավիթ Բեկը, եթե կենդանի լիներ, — գրում է նա, — չստորագրեր այդ փաստաթղթի տակ։ Հիմք ունենալով այդ պետք է ընդունել, որ 1726 թ. գարնանը Դավիթ Բեկն արդեն մահացած էր»³¹։ Բայց հիշեցնենք Աբրահամյանին, որ այդ փաստաթղթի տակ չեն ստորագրել նաև Դավիթ Բեկի շատ զորավարներ ևս, որոնք, չնայած դրան, շարունակել են ռազմական գործունեություն ծավալել։ Խնդիրն այն է, որ 1726 թ. Սյունիքում ստեղծված ռազմա-քաղաքական իրադրության պայմաններում երեւի նպատակահարմար չէր Դավիթ Բեկի ստորագրության առկայությունը Ռուսաստանից օգնություն խնդրելու աղերսագրում։ Բացի այդ, հայտնի է, որ հենց

30 «Պատմա-բանասիրական հանդես», էջ 177։

31 Նույն տեղում։

այդ ժամանակ Դավիթ Բեկի և Մխիթար Սպարապետի անձնական հարաբերությունները, զժտության պատճառով, շատ վատ էին: Այս իրողությունը հանգամանորեն լուսաբանված է պատմագրության մեջ³², որի վկայակոչումը, սակայն «ձեռնտու» չի եղել Աբրահամյանին՝ իր վարկածի «արժանահավատությունը» ապացուցելու համար:

Սակայն պրոֆ. Աբրահամյանին հարկ էր «հաղթահարել» բնագրային մի խոշորագույն ևս, որը սերտորեն առնչվում է վերոհիշյալ նրա «ուղղման» հետ: Ինչպես հայտնի է, Դավիթ Բեկի մահվանից հետո, փոխարինելով նրան՝ երկու տարի զխավոր հրամանատարությունը ստանձնել էր Մխիթար Սպարապետը. հետևաբար վերջինիս այդ պաշտոնավարումը պետք է համապատասխանեցվեր ոչ թե 1728-ից մինչև 1730 թ. ընկած ժամանակամիջոցին, այլ՝ 1726-ից մինչև 1728 թ.: Ի՞նչպես վարվել այս «խանգարիչ» փաստը մեջտեղից վերացնելու համար:

Պրոֆ. Աբրահամյանն այս առնչությամբ գրում է. «Անհրաժեշտ է նաև վերանայել Մխիթար Սպարապետի սպանության թվականը, որը քաղաքացիություն է ստացել 1730 թ. տակ: Դրա համար հիմք է ծառայել «Ընտիր պատմութեան» մեջ հաղորդվող հետևյալ տեղեկությունը. «Եւ անդ յիրոցն հարեալ թոփով, մեռանէր (Մխիթարն) յամի տեառն 1730, լետ երկուց ամաց իշխելոյն» (71): Այստեղից Աբրահամյանը եզրակացնում է. «Պարզվում է (sic!), որ Մխիթարի մահվան թվականը Սեբաստացու նախագահափարօրինակում բացակայում է: Այն, անշուշտ, հետաւամուտ է»³³: Բայց չէ՞ որ դարձյալ հեղինակային ընդարձակ բնագրում սեռով սպիտակի վրա գրված է. «Եւ անդ յիրոցն հարեալ թոփով մեռանէր (Մխիթարն) յամի Տեառն 1730, լետ երկուց ամաց իշխելոյն» (էջ 32),— բացարձակապես հար և նման Գուլամիրյանի հրատարակության: Նշանակում է՝ Մխիթարի մահվան 1730 թ. ոչ մի «հետսամուտ» վկայություն չէ, ինչպես կարծում է Աբրահամյանը:

Այնուհետև. հիշեցնելով, որ Մխիթար Սպարապետի տապանադրի թվականը սխալ վերծանմամբ է ներկայացվել հայագիտության մեջ և համապատասխանեցվել Գուլամիրյանի հրատարակության վկայակոչված թվականին, պրոֆ. Աբրահամյանը գրում է. «Ժամանակին սխալ է վերծանված եղել Մխիթար Սպարապետի տապանաքարի արձանագրության մեջ հիշված մահվան թվականը: Հավանական է, հրատարակչի մոտ ցանկություն է եղել այն համաձայնեցնել «Ընտիր պատմութեան» տարեթվի հետ»³⁴: Իր այս պնդման մեջ նա հենվում է նշանավոր վիճաբան Ս. Բարխուդարյանի «Դիվան հայ վիճաբանության» մեծարժեք աշխատության Բ պրակի էջ 64-ում տպագիր տեքստի և տախտակ XVI-ի № 56ա-ր տապանադրի լուսապատճենների վկայության վրա: Բերենք այդ տապանագիրը.

Այս է տապան ի հանգիս(տ) Էան,
իջ(և)ալ մաւ(մ)նով ի գերեզման.

32. Տե՛ս Ստ. Ե ա հ ու մ յ ա ն, Ընտիր պատմութիւն Դաւիթ Բեկին և սպարազմաց Հայոցն նախանու, Վաղարշապատ, 1871, էջ 4: Լ և ո, Հայոց պատմություն, հատ. 3, Երևան, 1946, էջ 685—686: Ա. Մ ի ռ զ ո յ ա ն, Մխիթար Բեկի կողմից ուսական կառավարության ուղղված ուղերձի հարցի շուրջը, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1952, № 8, էջ 87—98 և ուրիշներ:

33. «Պատմա-բանասիրական հանդես», էջ 178:

34. Նույն տեղում:

Սայ Մխիթար Մեծ անուվան,
 Սուրա օնէր իշխանութեան,
 Սայ բէմուրատ զնաց ջիվան,
 Որ է երկրէն սայ կաննով էր,
 ՆԱՀԱՏԱԿԵՑԱՆ ԹՎ.: ՌՃՀԶ:

Առանձնապես հատկանշական է վերջին՝ մեր կողմից ընդգծված տողը, որ պարփակված է մահվան թվականը: Այն լուսապատճեն նկարում առանձնակի է բերված: Բայց մենք չբավարարվեցինք դրանով. վերջերս ստացանք տապանագրի նոր նկարահանումը³⁵: Ամբողջ տապանագրի տարբեր ընթերցումները ուշադիր քննելու դեպքում ակնհայտ է, դառնում այն, որ բոլորովին տարբեր չափսի ու գրչության որակի են թվականը կրող զխանկյան քարի գրությունը տապանագրի տեքստի առաջին մասից: Բացի արտաքին հատկանիշներից, որ հեռավոր նմանության դեպքում շատ հաճախ նույնության խաբկանք են ստեղծում, առավել կարևոր են վիճադիր այդ հատվածների ներքին՝ իմաստային-բովանդակային հատկանիշները, որոնց ո՛չ Ս. Բարխուդարյանն է ուշադրություն դարձրել, ո՛չ էլ Ա. Աբրահամյանը:

Տվյալ դեպքում երկու փորագրությունների անհարիր լինելը վկայում է նրանց փերականակա անհամապատասխանությունը: Այսպես, շիրմաքարի տեքստը, բացի վերջին տողից, խոսում է եզակի անձնավորության՝ Մխիթար Սպարապետի կենսագրական ամենաէական տվյալների մասին, բայ-ստորոգյալների համապատասխան՝ եզակի ձևավորմամբ, մինչդեռ զխանկյան շիրմաքարի բայ-ստորոգյալը՝ հոգնակի ձևավորումն ունի («նահատակեցան»), ուստի և այն վերաբերում է ոչ թե մեկի, այլ մի ֆանիսի վախճանին:

Բոլոր դեպքերում՝ չպետք է մոռանալ, որ տապանագիրը հետագա ժամանակների գործ է, ուստի և նրա վավերականությունը վերապահությամբ պետք է ընդունել:

Ասվածից հետևում է, որ պրոֆ. Աբրահամյանի բոլոր ձեռքերը՝ «Ընտիր պատմութեան» մեջ մատնանշված Դավիթ Բեկի և Մխիթար Սպարապետի մահվան թվականները «խախտելու» իր դիտավորությունն իրականացնելու ուղղությամբ՝ անհիմն են:

О «ПЕРВОНАЧАЛЬНОМ» ВАРИАНТЕ «ИСТОРИИ ДАВИД БЕКА»

Л. Г. ХАЧЕРЯН, А. Н. ХАЧАТРЯН

(Р е з ю м е)

Одним из главных центров освободительной войны армянского народа в XVIII в. против тяжелого ига персидских завоевателей был горный Сюник, где армянские полки под водительством выдающегося полководца Давид Бека в 1722 г. низвергли ярмо персидских ханов. Защищая свои завоевания, они вынуждены были долгие годы вести упорные военные действия также против вторжения турецких захватчиков. До нас дошел цельный труд, озаглавленный «Избранная история Давид Бека и войны кафанских армян...» и подробно отражающий историю

35 Ընկ. Ք. Պետրոսյանը մեր խնդրանքով Գորիսից ուղարկեց այդ տապանագրի ֆոտոպատճենը, որի համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում:

этой борьбы. Он был написан под диктовку очевидцев и активных участников событий (Степаноса Шаумяна и др.). Труд этот, в первый и последний раз изданный на основании одной рукописи в Вагаршапате в 1871 г. Абгаром Гуламиряном, теперь является библиографической редкостью.

В третьем номере «Вестника архивов Армении» за 1972 г. проф. А. Г. Абрамян опубликовал работу под названием «Первоначальный вариант «Истории Давид Бека», в которой напечатан «найденный» им текст «Истории», а в четвертом номере «Историко-филологического журнала» — статью «К вопросу об освободительном движении Сюника в XVIII веке», преследующую цель «разрешить некоторые спорные вопросы, неправильно изложенные в отредактированном варианте (дата смерти Давид Бека, период руководства движением Мхитаром Спарепетом и т. д.)...».

Анализ опубликованного проф. А. Г. Абрамяном «Первоначального варианта...», на основании которого им делается попытка внести изменения в периодизацию освободительной борьбы Сюника и в биографию ее организаторов, показывает, что публикация спорного, изобилующего ошибками, неполного черновика записок, осуществленная на основании машинописного экземпляра, не оправдана. Текстологические и источниковедческие аргументы опровергают филологические и историографические заключения проф. А. Г. Абрамяна.